



Մ ՈՒՐԲ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՍ ՄԱՅՐ ԵՍԵՆԷՆԻ



Նոր Կիրակի

28 ԱՊՐԻԼ 2019

ԸՆԹԵՐՑՈՒՄ

«ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»

ԳԻՐՔԷՆ

(5.34-6.7)

Այն ատեն ատեանին մէջ ոտքի ելաւ Գամաղիէլ անունով մէկը, որ փարիսեցիներէն էր եւ ամբողջ ժողովուրդին կողմէ յարգուած օրէնքի ուսուցիչ մը, հրամայեց որ նախ առաքեալները դուրս տանին, եւ ապա ժողովականներուն ըսաւ.

«Ո՛վ իսրայէլացիներ, լաւ մտածեցէք եւ ա՛պա որոշում առէք այս մարդոց մասին: Կը յիշէք թէ ժամանակ մը առաջ Թեւեղաս անունով մէկը ելաւ, որ ինքզինքը երեւելի մէկը կը յայտարարէր, եւ շուրջ չորս հարիւր հոգիներ իրեն միացան. բայց ինք սպաննուեցաւ եւ բոլոր իրեն միաբանածները քայքայուեցան ու ցրուեցան: Իրմէ ետք Գալիլիացի Յուզա մը ելաւ մարդահամարի օրերուն եւ բազմաթիւ ժողովուրդ ապստամբութեան մղեց իրեն հետ. սակայն ան ալ կորսուեցաւ, եւ բոլոր անոնք որ իրեն յարած էին՝ ցրուեցան: Գալով ասոնց, կ'ըսեմ ձեզի. այս մարդոցմէ ձեռք քաշեցէք եւ ձգեցէք զիրենք: Որովհետեւ, եթէ ասոնց խորհուրդն ու գործը մարդոցմէ է՝ պիտի խափանուի. իսկ եթէ Աստուծմէ է՝ չէք կրնար խափանել, եւ թերեւս այդ ձեռով Աստուծոյ դէմ պայքարած ըլլաք»:

Ժողովականները հաւանեցան Գամաղիէլի խօսքերուն, եւ առաքեալները կանչել տալով՝ ծեծել տուին. ապա պատուիրելով որ ա՛լ Յիսուսի անունով չխօսին, արձակեցին զանոնք: Իսկ առաքեալները ատեանէն հե-

ռացան, ուրախանալով որ Տիրոջ անունին համար անարգանքի արժանացան: Ամէն օր, թէ՛ տաճարին եւ թէ՛ իրենց տուներուն մէջ, անդադար կը սորվեցնէին՝ Յիսուս Քրիստոսը քարոզելով:

Ժամանակ մը ետք, երբ Յիսուսի հետեւորդները շատցան, յունախօս հրեաները սկսան տրտնջալ եբրայախօս հրեաներուն դէմ, որովհետեւ ամենօրեայ նպաստի բաշխումին մէջ իրենց այրիները կ'անտեսուէին: Այն ատեն, տասներկու առաքեալները կանչեցին բոլոր հաւատացեալները եւ ըսին.

«Մենք չենք ուզեր Աստուծոյ խօսքին քարոզութիւնը ձգել եւ ուտելիք մատակարարելով զբաղիլ: Հետեւաբար, եղբայրներ, ձեր կողմէ վկայուած եօթը հոգիներ ընտրեցէք, որոնք Սուրբ Հոգիով եւ իմաստութեամբ լեցուն ըլլան. զանոնք այս անհրաժեշտ գործին համար կարգենք, իսկ մենք աղօթքի եւ Աստուծոյ խօսքին մատակարարման նուիրուինք»:

Հաւատացեալներ ուղիղ գտան առաջարկը եւ հետեւեալները ընտրեցին.՝ Ստեփանոսը, որ հաւատքով եւ Սուրբ Հոգիով լեցուն մարդ մըն էր, Փիլիպպոսը, Պրոքորոնը, Նիկանորը, Տիմոնը, Պարմենասը եւ Նիկողայոսը որ հրէութեան դարձած անտիոքացի մըն էր: Ապա զանոնք բերին առաքեալներուն առջեւ, որոնք աղօթեցին եւ իրենց ձեռքը դրին անոնց վրայ:

Ահա այսպէս Աստուծոյ խօսքը կը տարածուէր եւ Երուսաղէմի մէջ հաւատացեալներու թիւը մեծապէս կը շատնար: Նոյնիսկ քահանաներէն շատեր հաւատքը կ'ընդունէին:

ԸՆԹԵՐՑՈՒՄ ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԷՆ

(3.1-12)

Եղբայրներս, ամէնքդ ալ ուրիշները սրբագրելու հետամուտ մի՛ ըլլաք, գիտնալով որ մենք՝ ուսուցանողներս աւելի խստութեամբ պիտի դատուինք, որովհետեւ բոլորս ալ յանցանքներ ունինք:

Ան որ գիտէ իր խօսքերը կշռել՝ կատարեալ մարդ է, ինքզինքին իշխելու կարող: Տե՛ս թէ ինչպէս ձերուն բերանը սանձ կը դնենք որպէսզի մեզի ենթարկուին, եւ անով ձիուն բոլոր շարժումները կը կառավարենք: Կամ դիտէ նաւերը. ո՛րքան ալ մեծ ըլլան եւ ի՛նչպիսի զօրաւոր հովերէ ալ քշուին, փոքրիկ դեկ մը գիրենք կ'ոլողէ դէպի հոն ուր նաւավարը կը փափաքի տանիլ: Նոյնպէս ալ լեզուն. թէեւ փոքր անդամ մըն է, բայց մեծամեծ բաներով կը պարծենայ: Գիտէք թէ պղտիկ կայծը հսկայ անտառ մը կընայ հրդեհել: Լեզուն ալ կրակ է: Անիրաւութեան աշխարհ մըն է անիկա: Թէեւ պարզ մէկ անդամն է մարմնին, բայց ամբողջ մարդը կ'ապականէ, եւ գեհենի կրակով բռնկած՝ մեր ամբողջ կեանքը կրակով կը վառէ: Բոլոր տեսակի գազանները, թռչունները, սողունները եւ ծովային կենդանիները նուաճուած են մարդուն կողմէ եւ կը հնազանդին անոր: Բայց ո՛չ ոք կընայ հնազանդեցնել մարդկային լեզուն որ չար է, անզսպելի եւ մահացու թոյնով լեցուն: Անով կ'օրհնենք մեր Տէրը եւ Հայրն Աստուած, եւ դարձեալ անով կ'անիծենք մարդիկը որոնք Աստուծոյ նմանութեամբը ստեղծուած են: Այսինքն՝ նոյն բերանէն կ'ելլեն թէ՛ օրհնութիւնը եւ թէ՛ անէծքը: Ասիկա ճիշդ չէ սակայն, եղբայրներս: Միթէ աղբիւր մը միեւնոյն ակէն քաղցր եւ դառն ջուր կը բղխէ՞: Կարելի բա՞ն է, եղբայրներս, որ թղենին ձիթապտուղ տայ կամ որթատունկը՝ թուզ: Նմանապէս կարելի չէ որ աղուտ հողէն քաղցր ջուր բղխի:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

(1.1-17)

Աշխարհի ստեղծագործութենէն առաջ գոյութիւն ունէր Բանը, այսինքն Որդին: Բանը Աստուծոյ հետ էր եւ Բանը Աստուած էր: Անիկա սկիզբէն Աստուծոյ հետ էր: Անով էր որ Աստուած ամէն ինչ ստեղծեց. առանց անոր ոչ մէկ բան ստեղծեց: Կեանքը Անով սկիզբ առաւ. եւ կեանքը մարդոց համար լոյսն է՝ որ խաւարին մէջ կը փայլի. եւ խաւարը չկրցաւ Անոր յաղթել:

Յովհաննէս, որ Աստուծոյ կողմէ զրկուած մարդ մըն էր, եկաւ Լոյսին համար վկայութիւն տալու, որպէսզի ամէն մարդ Անոր անունին հաւատայ: Ինք Լոյսը չէր, այլ՝ Լոյսին համար վկայ մը: Բա՛նն էր ճշմարիտ Լոյսը, որ աշխարհ գալով կը լուսաւորէ ամբողջ մարդկութիւնը: Աշխարհի մէջ էր Ան, աշխարհը Իրմով ստեղծուեցաւ, սակայն աշխարհը զԱյն չճանչցաւ: Իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, բայց մարդիկ գի՛նք չընդունեցին: Իսկ գի՛նք ընդունողներուն եւ Իրեն հաւատացողներուն՝ իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու. ո՛չ արեան ճամբով եւ ո՛չ մարմնի կամ մարդկային կամքով, այլ Աստուծմէ ծնելով:

Եւ Բանը մարմին եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ՝ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն: Մենք տեսանք Անոր փառքը, փառքը Աստուծոյ միածին Որդիին:

Յովհաննէս Անոր մասին վկայեց, յայտարարելով. «Ասիկա է Ան, որուն մասին կ'ըսէի. “Ան որ ինձմէ ետք պիտի գայ՝ ինձմէ մեծ է, որովհետեւ ինձմէ առաջ գոյութիւն ունէր”»: Իր լիառատ շնորհքէն մենք շարունակ շնորհք ստացանք, որովհետեւ Օրէնքը Մովսէսի միջոցաւ տրուեցաւ, մինչ շնորհքն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ: